ԵՐԵՎԱՆԻ
ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ
ԱՅԳԻ

ԷՅ-073-2023թ
30.08.2023թ

«ԿՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ա. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ
*/ՀՀ, ք. Երևան Արին Բերդի 40, հեռ.՝ +37494471539/*

Հարգելի պարոն ՄԿՐՏՉՅԱՆ

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի /այսուհետ նաև՝ Այգի/ կարիքների համար 2022 թվականի նոյեմբերի 21-ին հայտարարված սննդամթերքի և կերերի ձեռքբերման ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում 9-րդ, 12-13-րդ, 22-րդ, 52-53-րդ, 76-78-րդ չափաբաժինների մասով, որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «ԿՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 01043009, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք 0056, Գայի պ./Շ/11/20, հեռ.՝ +37410624966, էլեկտրոնային հասցե՝ COWPERWOODCO@yandex.com), որի հետ 09.01.2023թ-ին կնքվել է ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-1 ծածկագրով ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի շրջանակներում, հետագայում՝ ֆինանսական միջոցների հատկացմամբ պայմանավորված՝ 13.01.2023թ-ին կնքվել է նաև ֆինանսական միջոցների հատկացման և վճարման ու գնման ժամանակացույցների հաստատման համաձայնագիր:

22.08.2023թ-ին, Ձեր կողմից ներկայացվել է գրություն, համաձայն, որի Ձեր ընկերությունը դադարեցնում է տնտեսական գործունեությունը և հրաժարվում է պայմանագիրը կատարելուց ու այդ օրվանից ի վեր չեք կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև՝ այն հանգամանքը, որ «ԿՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ն թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ Այգու կարիքների համար սննդամթերքի մատակարարումը ունի կենսական նշանակություն և դրանց ոչ պատշաճ իրականացումը կարող է հանգեցնել կենդանատեսակների անկումների և ամբողջովին խաթարել Այգու գործունեության բնականոն ընթացքը, Այգու կենդանիների կերակրման առաջնահերթությամբ և հրատապությամբ պայմանավորված, «ԿՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ի հետ կնքված ապրանքի մատակարարման ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-1 ծածկագրով պայմանագիրը 9-րդ, 12-13-րդ, 22-րդ, 52-53-րդ, 76-78-րդ չափաբաժինների մասով միակողմանի լուծվել է:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ձեր կողմից սահմանված կարգով համաձայնագիրը ստորագրելուց ներկայացվել են որակավորման և պայմանագրի

կատարման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքների տեսքով, առաջարկում ենք, Ձեր կողմից ներկայացված միակողմանի հաստատված տուժանքների 1.8 կետի համաձայն 10 աշխատանքային օրվա ընթացում՝ մինչև ս.թ. սեպտեմբերի 12-ը ներառյալ, ապահովել չմատակարարված քանակությունների չափով, մասնավորապես՝ որակավորման ապահովման համար՝ 734,133.60 (յոթ երեսունչորս հազար մեկ հարյուր երեսուներեք ամբողջ վաթսուն հարյուրերորդական) ՀՀ դրամի, իսկ պայմանագրի կատարման ապահովման համար՝ 489,422.40 (չորս հարյուր ութսունինը հազար չորս հարյուր քսաներկու ամբողջ քառասուն հարյուրերորդական) ՀՀ դրամի վճարումը՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի «Ակբա Բանկ» ԲԲԸ-ում բացված 22000919024000 բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

Վերոնշյալի վերաբերյալ Այգին դիմել է Ձեզ սպասարկող բանկին՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ-ին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ վճարումների չկատարման դեպքում Այգին վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

Հարգանքով՝
«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ-ի ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ